ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Այրարատ, Բարձր-Հայք, Գուգարք, Սիւնիք, Վասպուրական եւ Տուրուբերան նահանգներում Աչքաղարեան շրջանից մնացած եւ իրենց գոյութիւնը պահպանած տիտանական ամրոցների, մարտկոցների եւ պարիսպների հսկայական տիպարները մինչեւ օրս խրոխտաբար դեռ կանգուն են Ճորոխի Աւազանում եւ նորա բարձունքների լանջերին ու կատարներին: Տայոց աշխարհը եւ Ճորոխի ամբողջ աւազանը իր քաղաքակրթական զարգացման ստիճանական շրջաններով չի տարբերում իր դրացի նահանգներից, որոց հետ բնական եւ քաղաքական կապերով շղթայուած է եղել դարերից ի վեր: Ուրարտա-Ասորական, Հելլէնա-Հռովմէական քաղաքակրթական շրջաններից շատ վաղ եւ զուգընթացաբար ինչ ձեւի բերդեր, պարիսպներ, ամրոցներ, դղեակներ եւ տաճար — մեհեաններ, գերեզման — Դոլմէն-Կուրգաններ, որ մնացել են Հայաստանի կենդրոնական նահանգներում, միեւնոյն ճարտարապետական ոճը նկատելի է ամբողջ Ճորոխի Աւազանում որն